## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի, 2019 թվականի № 41-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 49-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշման Հավելված № 1-ով հաստատված «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի 2019 թվականի հաղորդումների ռադիոծրագրերի /ալիքների/ թիվը և հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալները սահմանող աղյուսակում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշման 2-րդ կետը և Հավելված № 2-ը ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

20 օգոստոսի, 2019 թվականի

ք. Երևան